

զգիրս գիտէին և ոչ զգորութիւնս գրոց՝ **ըստ Տեառն բանի**» (էջ 242, Մատթեոս, ԻԲ, 29), կամ՝ «...վասն որոյ ոչ կատարիր՝ **ըստ վկայութեան Սաղմոսին**, թէ ո՛չ Տէր շինէ զտուն, ի նանիւր վաստակին շինողք նորա» (էջ 198, Սաղմոս ՃԻԶ, 1), և այլն: Այս միտումն, ի դեպ, նկատելի է նաև այսօր, սակայն միակերպ ու ինչ-որ առումով ամրագրված դրսևորումներ ունի, այնինչ՝ միջնադարում հատկանշվում էր բազմազանությամբ:

Ինտերտեքստը «Գիրք պատմութեանց»-ում հաճախ հանդես է գալիս ներփակ կերպով: Սակայն ներփակությունը դեռևս թաքնվածություն չէ, առավել ևս Դավրիժեցու մոտ, քանզի նա, հազվադեպ բացառություններով, ապահովում է նշան-ցուցիչի գործառույթը, որն էլ բացահայտում է ինտերտեքստի աղբյուրը: Բավարարվելով նշան-ցուցիչով՝ Դավրիժեցին, ըստ ամենայնի, վստահ է եղել աստվածաշնչյան տվյալ դրվագի հանրահայտության և, ընդհանրապես, ընթերցողի սուրբգրային իմացությունների վրա: Դա ժամանակի մտածողության առանձնահատկություններից է, որ միջնադարյան տեքստերի վերլուծության-մեկնության պարագային անպայման պետք է հաշվի առնել: Դիտարկենք հետևյալ օրինակը, որտեղ աստվածաշնչյան ինտերտեքստը համեմատության օբյեկտ է. «Իսկ այլք ոմանք ասեն թէ Մելքիսէթ կաթողիկոսն էր այր փառամոլ և հետևող նախագահ իշխանութեան, յորոյ պատճառէ բաշխէր առատութեամբ ինչս ամենեցուն, և զամենեցուն զսիրտն հանգուցանէր առ ինքն, և զամենեսեան առնէր ինքեան բարեկամ **ըստ նմանութեան Աբիսողոմայ**» (էջ 58): Այստեղ ընդգծված հղումը նշան-ցուցիչի դեր է կատարում և ներփակում է հետևյալը. «Եւ լինէր յորժամ մերձենայ առ նա այր երկիր պագանել նմա, ձգէր զձեռն իւր եւ առինքն մատուցանէր, եւ համբուրէր զնա: Եւ առնէր Աբեսաղոմ ըստ բանիս ըստ այսմիկ ամենայն Իսրայելի եկելոյ ի դատաստան առ արքայ. եւ յանկուցանէր յինքն Աբեսաղոմ զսիրտ ամենայն արանց Իսրայելի» (Բ. Թագ., ԺԵ, 5-6):